ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2020 թվականի N281-Ա

«ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 158-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «ը» ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 2012-Ա որոշումը՝

որոշում եմ.

1. «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 1569735936 (մեկ միլիարդ հինգ հարյուր վաթսունինը միլիոն յոթ հարյուր երեսունհինգ հազար ինը հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 6028632 (վեց միլիոն քսանութ հազար վեց հարյուր երեսուներկու) ՀՀ դրամով՝ բաժնետոմսերի մարման միջոցով: Նվազեցումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 1563707304 (մեկ միլիարդ հինգ հարյուր վաթսուներեք միլիոն յոթ հարյուր յոթ հազար երեք հարյուր չորս) ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի օգոստոսի 12-ի N 158-Ա որոշմամբ հաստատված « Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1563707304 (մեկ միլիարդ հինգ հարյուր վաթսուներեք միլիոն յոթ հարյուր յոթ հազար երեք հարյուր չորս) ՀՀ դրամ, որը կազմում է 297509 (երկու հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր ինը) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 5256 (հինգ հազար երկու հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 297509 (երկու հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր ինը) սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

3. Հանձնարարել «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

15.12.2020

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Մ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 15
ք. Կապան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2020 թվականի
դեկտեմբերի 15-ի N - Ա որոշմամբ
ՀՀ Սյունիքի մարզպետ՝

Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

«15» դեկտեմբերի 2020թ.

Կազմված է 15.12.2020թ. և բաղկացած է 1 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ - - -

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 13.08.2010թ.
Գրանցման թիվ- 222.120.01255

ՀՎՀՀ 09417527
13.08.2010թ. գրանցված կանոնադրության
Թիվ - - - - փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

« » ---------- 2020թ

«ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1. «ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1). Ընկերության կանոնադրության 4.2 կետը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ.

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1563707304 (մեկ միլիարդ հինգ հարյուր վաթսուներեք միլիոն յոթ հարյուր յոթ հազար երեք հարյուր չորս) ՀՀ դրամ, որը կազմում է 297509 (երկու հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր ինը) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 5256 (հինգ հազար երկու հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 297509 (երկու հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր ինը) սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 13.08.2010թ.) բաղկացուցիչ մասը: